ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1784-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԼԵՆՏԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 65-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) հավելվածը 11-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 12-15-րդ կետերով՝

«

12.	5205220000	Մանվածք բամբակե (բացի կարի թելերից)՝ 85% զանգվածային բաժին կամ ավելի բամբակի մանրաթելերի պարունակությամբ, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. - - 714,29 դտեքսից պակաս, բայց 232,56 դտեքսից ոչ պակաս գծային խտությամբ (14 մետրական համարից բարձր, բայց 43 մետրական համարից ոչ բարձր)	Բամբակե մանվածք գուլպայի և կտորի արտադրության համար	կգ	40 000	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	72 000 000	
13.	5205230000	Մանվածք բամբակե (բացի կարի թելերից)՝ 85% զանգվածային բաժին կամ ավելի բամբակի մանրաթելերի պարունակությամբ, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. - - 232,56 դտեքսից պակաս, բայց 192,31 դտեքսից ոչ պակաս գծային խտությամբ (43 մետրական համարից բարձր, բայց 52 մետրական համարից ոչ բարձր)	Բամբակե մանվածք գուլպայի և կտորի արտադրության համար	կգ	20 000	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	42 900 000	
14.	5205240000	Մանվածք բամբակե (բացի կարի թելերից)՝ 85% զանգվածային բաժին կամ ավելի բամբակի մանրաթելերի պարունակությամբ, մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. - - 192,31 դտեքսից պակաս, բայց 125 դտեքսից ոչ պակաս գծային խտությամբ (52 մետրական համարից բարձր, բայց 80 մետրական համարից ոչ բարձր)	Բամբակե մանվածք գուլպայի և կտորի արտադրության համար	կգ	40 000	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	57 800 000	
15.	5509310000	Մանվածք սինթետիկ մանրաթելերից (բացի կարի թելերից)՝ մանրածախ վաճառքի համար չբաժնեծրարված. - նայլոնից կամ այլ պոլիամիդներից մանրաթելերի 85% զանգվածային բաժին կամ ավելի պարունակությամբ	Միաթել մանվածք գուլպայի արտադրության համար	կգ	60 000	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	Հնդկաստան Չինաստան Թուրքիա	88 20 000	

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «2 439 900 000» թիվը փոխարինել «2 701 520 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ